

Հ Ա Մ Ա Չ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՐԴԱՆԱՆԻ ՀԱՇՒՄՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՍՏԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Հոբդանանի Հաշիմյան Ցրագափորության կառավարությունը (այսուհետ՝ «Կողմեր»),

Հիմնվելով երկու երկրների իրավահավասարության սկզբունքի և փոխադարձ ազգային չափերի վրա,

Շահակամարտի անրազնիղել և զարգացնել երկկողմ համագործակցությունը գյուղատնտեսության բնագավառում,

Համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Կողմերը սույն Համաձայնագրին, միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին և իրենց պետությունների ազգային օրենսդրությանը համապատասխան կիրականացնեն համագործակցություն գյուղատնտեսության և ագրոարդյունաբերության բնագավառներում:

Հոդված 2

Կողմերը համագործակցություն կիրականացնեն հետևյալ ոլորտներում՝

- բուսաբուծություն և սերմնարուծություն՝ գյուղատնտեսական մշակաբույսերի անեցման, սերմերի և տնկիների արտադրության տեխնոլոգիաներ,
- գյուղատնտեսական հողերի կառավարում՝ մասնավորապես երաշտային պայմաններում չորադիմացկուն մշակաբույսերի տեսակների դիմադրողականության բարձրացում և արտադրություն,
- օրգանական գյուղատնտեսություն՝ պեստիցիդների անվտանգ օգտագործում և բույսերի պաշտպանություն,
- անասնաբուծություն և ձկնաբուծություն,
- գյուղատնտեսական ապրանքների վերամշակում,

- ուղղման համակարգերի կառավարում,
- գյուղատնտեսական արտադրանքի երկկողմ առևտրի զարգացում:

Ֆոդված 3

Կողմերը համագործակցության կիսականազմեն հետևյալ ձևերով՝

- փորձի և համապատասխան տեղեկատվության փոխանակում,
- գյուղատնտեսությանը վերաբերող օրենսդրության մասին տեղեկատվության փոխանակում,
- գյուղատնտեսության ոլորտի մասնագետների վերապատրաստում,
- հետազոտական ծրագրերի համատեղ մշակում, մասնագետների և փորձագետների վերապատրաստման աջակցություն, փորձագետների փոխանակում,
- Կողմերի ներկայացուցիչների մասնակցություն երկու երկրներում կազմակերպվող ցուցահամոզեաներին, սեմինարներին, կոնֆերանսներին,
- գյուղատնտեսական հոսքի և մրեքքների վաճառքի խրախուսում՝ մասնավորապես տոմազանատներին, ցուցահամոզեաներին և գործարար հանդիպումներին մասնակցելու միջոցով,
- աջակցություն երկու կողմերի մասնավոր ագրոարդյունաբերական հատվածի ներկայացուցիչների միջև ուղղակի կապերի ստեղծմանը,
- հնարավոր ներդրողների համար երկկողմ հետաքրքրություն ներկայացնող ոլորտների նույնականացում,
- աջակցություն երկու երկրներում համատեղ ձեռնարկությունների ստեղծմանը:

Ֆոդված 4

Կողմերը կստեղծեն Համատեղ աշխատանքային խումբ՝ գյուղատնտեսության բնագավառում համագործակցություն ծավալելու նպատակով, որը բաղկացած կլինի իրենց իրավասու մարմինների ներկայացուցիչներից:

Համատեղ աշխատանքային խումբը կհաստատի համագործակցության ծրագրերը և եղանակները, ինչպես նաև կհամակարգի այդ ծրագրերի իրականացումը:

Ըստ անհրաժեշտության, կողմերը կարող են կազմակերպել Համատեղ աշխատանքային խմբի նիստեր:

Ֆոդված 5

Կողմերից յուրաքանչյուրը կնույն սեփական ծախսերը, որոնք կառաջանան Համատեղ աշխատանքային խմբի կողմից հաստատված ծրագրերի կիրարկման ընթացքում, եթե այլ նախնական համաձայնություն կողմերի միջև ձեռք չի բերվել:

Պողված 6

Կողմերից յորպահանջորի նախաձեռնությամբ և փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրություններով, ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրով սահմանված կարգով և կկազմեն զրա անբաժանելի մասը:

Պողված 7

Սույն Համաձայնագիրը չի ազդի Կողմերի այն իրավունքների և պարտավորությունների վրա, որոնք բխում են այլ միջազգային պայմանագրերից, որոնց որևէ մեկը կամ երկուսն էլ կողմ են:

Պողված 8

Սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված տարաձայնությունները կլուծվեն Կողմերի միջև բննարկումների և բանակցությունների միջոցով:

Պողված 9

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի Կողմերի անհրաժեշտ ներպետական ցնթացակարգերի կատարման մասին վերջին ծանուցագիրը դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից:

Սույն Համաձայնագիրը կզործի հինգ տարի ժամկետով: Դրա գործողությունը՝ ինքնաբերաբար կերկարաձգվի հինգ տարի տևողությամբ լրացուցիչ ժամանակահատվածով, ըստառաբյամբ, եթե Կողմերից մեկը գրավոր ծանուցի մյուսին սույն համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին՝ սույն Համաձայնագրի ժամկետի ավարտից վեց ամիս առաջ:

Ամեն դեպքում Համաձայնագրի գործողության դադարեցման ժամանակ շարունակվող գործողությունները կհասցվեն ավարտին՝ սույն Համաձայնագրի դրույթների համաձայն:

Կատարված է Ամժամում 2014թ. հոկտեմբերի 29-ին, երկու հավասարազոր բնօրինակով, յուրաքանչյուրը հայերեն, արաբերեն և անգլերեն լեզուներով:

Սույն Համաձայնագրի մեկնաբանման տարաձայնությունների դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն լեզվով տեքստին: